№ 209 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 209

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲԼԻ

Յաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (սկսած)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է հայ հասարակութեան, որ Կրծանիսում, Ծիրանաւոր վանքի գաւթում ապաստանած 150—170 օրբերի խնամակալութիւնը սեպտ. 15-ից վերցրել է իր վրա՝ հոգալով նոցա առօրեայ ծախքերն և մտածում է նրանց դաստիարակութեան մասին։

Միութիւնը յայտնելով այս մասին, կոչ է անում բոլոր նրանց, օրենց սրտին մօտ է աւերեալ հայրենիքից փախած դժբաղդ օրբերի կեանքի գոյութեան ապահովութիւնը, թող բարեհաճեն իրանց լուման, ինչ չափով էլ լինի նա, նուիրաբերել այդ տարաբաղդ օրբերին մնացանելու և ազգային ոգով դաստիարակելու համար։

Նուիրատուութիւնները թէ գրամով և թէ զանազան իրերով՝ խնդրվում է ուղղել հետեւեալ հասցէներին.

1) Միութեան նախագահ Արշակ Սաֆարեանին, Купеческій банкъ.
2) Միութեան անդամ-գանձապահ Յակոբ Տէր-Յարութիւնեանին, Кафе «Централь» (Эрив. площадь).
3) Միրանաւորի գաւթում կառավարչին։

(օ. մ.) առ. 658. 10—3 Հայրենակցական Միութիւն

Նպատակի նկարչութեան ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ **Ե. Պատկանեան** ԲԱՑ ԷԱՐԵԼ

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Դիմել կարելի է երեկոյեան ժամը 5—7-ը, Բէբուտովսկայա փ. № 2, տ. Քիշմիշեանի։
առ. (ե. հ.) 664. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

հինգշաբթի, սեպտեմբերի 24-ին, հասարակութեան խնդրանքը, 3-րդ անգամ կը ներկայացվի

ԱՍԻԱԿԱՆ ՈՒՐԱԽ ՕԳԵՐԷՍ

ՆԱ ՉԸ ԼԻՆԻ—ՍԱ ԼԻՆԻ

(Օ օլմասուն—բու օլսուն)

3 գործողութեամբ։

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին։ Տեղերի գները 60 կ.-ից մինչև 1 ր. 50 կ.։ Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են—զամարդիկ 50-ական կոպ., կանայք և աւանդները 25-ական կոպէկ։
առ (հ.) 668. 2—2

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Ղազարեան

(Մանրապէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
(առ. ժ. 1—2.
Ընդունում է ամեն օր՝ (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Բարիշեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(ե.հ.կ.) առ. 634. 100—6

Թերլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ.Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ներքին հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ԵՆԷՎՄՕՏՕՐԱԿՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների ընդունելութիւնը և լուսանկարները լաւագոյն ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐՈՎ ՁԱՆԹԱՑԻՆ ՀԱՐՄԱՐՈՒԹԵՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցերեկ և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская, 23. тел. 7-29.
առ. (ա. օ.) 504. 100—44

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

ԿԷՕՆՃԵԱՆ

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պիօմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց բլիմբի) և կաուչուկից կատարելագործված մեթոդով։

Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—34

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՒՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹՒՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
22 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶՕՐԱՃԱԿԱՏ. — Ամբողջ ռազմաճակատի վրա, բացի Վանի շրջանից, լուրջ դէպքեր չեղան։ Թուրքերը զանազան տեղերում փորձեցին առաջանալ մեր սահմանի ուղղութեամբ, բայց այդ փորձերը խափանվեցին։

Անհամեմատ տաք ընդհարումներ տեղի ունեցան Սև-ծովի ափի շրջանում, Խոփից դէպի հարաւ-արևմուտք և դէպի հարաւ-արևելք մինչև Ճորոխ ու Օլթի գիւղերը—Իշխանի շրջանում։

Սկսած Ճորոխ և Օլթի գետերի միացման մօտից և ապա դէպի հարաւ-արևելք, մինչև Թօրթում և Խորոսան, տեղի ունեցան մի քանի աշող հետախուզումներ։

Դուտախի շրջանում՝ Եփրատի վրա, Ալաշկերտից դէպի հարաւ, Մանազկերտից դէպի արևելք և Արճէշի շրջանում, Վանի լճի հիւսիս-արևելեան ծայրում ընդհանուր առմամբ հանդիստ է։

Վան քաղաքից դէպի հարաւ-արևմուտք մեր զօրքերը, չարդելով թիւրքաց մի զօրաբաժնի, շարունակեցին սեպտեմբերի 20-ին հետապնդել հակառակորդին, որ նահանջում է Վանի լճի հարաւային ափի երկարութեամբ, շարժվելով լեռնային ճանապարհներով, 8—10 ֆուտ բարձրութիւն ունեցող գագաթներով։

Այնուհետև դէպի հարաւ-արևելք, Բաշկալէի և Ուրմիայի շրջանում փոփոխութիւն չը կայ։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԸ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԻ

(Պետ. Հեռ. Գործ.)
21 սեպտեմբերի

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Կ. Պոլսի ամերիկեան դեսպան Մորգենտաուին յանձնարարված է յայտնել Թիւրքաց արտաքին գործերի մինիստրին, որ եթէ Թիւրքիայում չը դադարեն հայերի կոտորածները, այն դէպքում կը խզվեն բարեկամական յարաբերութիւնները Միացեալ-Պետութիւնների և Թիւրքիայի միջև։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
22 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԶՕՐԱՃԱԿԱՏ — Բիգայի շրջանի ռազմաճակատի վրա տեղի ունեցան մի քանի ընդհարումներ։ Բիրագալէնից դէպի հիւսիս մեր զօրքերը տիրեցին գերմանական խրամատների մի մասին և կաբում գետի ձախ ափին։ Դէմէն-Դրիվիատա-Մէդդիօլ-Վիշնեվ լճերի զօրաճակատի վրա կռիւները շարունակվում են։ Տաք ձեռնամարտից յետոյ, մենք գրաւեցինք Վասիլինա և Ռուսակի գիւղերը։ Պատէրնակի գիւղի մօտ սուլինային կռիւը վերջացաւ մեզ օգտին։ Մենք գրաւեցինք գիւղը։

Սմօրգինա շրջանում և Բոշնոյից դէպի հարաւ, ինչպէս և վերին Նէմանի վրա շարունակ ընդհարումներ են հակառակորդի հետ, որ չանում է առաջանալ դէպի արևելք։

Պրիպիատայից դէպի հարաւ, մինչև Ստոբի վրա տեղի ունեցած կռիւից յետոյ, Գովէլ-Սարնա-երկաթուղագծի շրջանում մեր զօրքերը գրաւեցին Վուլկա-Գոլուզիչայա, Օպտովօ, Վոլչէսկ և Մէդվէժկա գիւղերը։ Թշնամին տեղ-տեղ փախչում է անկարգ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
23 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.— Ֆելդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է սեպտ. 21-ին.

Երէկ ցերեկով թշնամին ուժեղ ռմբակոծութիւն սկսեց և մի քանի կրնակի յարձակումներ գործեց մեր խրամատների դէմ Վերմէլի և Գիւլուվի ճանապարհի մէջև. յարձակումները չափազանց եռանդուն էին, սակայն թշնամուն չաջողվեց հասնել մեր խրամատներին, ըստ օրում նա կրեց մեծ կորուստներ։

ՀԱՒՐ.— Բէլգիական հաղորդագրութիւն. Թշնամին առանձնապէս ուժեղ ռմբակոծութեան ենթարկեց մեր դիրքերը Դիկսմիւդէի մօտ։ Հետևակ զինդերի անընդհատ յարձակումը մենք դիւրութեամբ վանեցինք։

ՊԱՐԻԶ.— Երեկոյեան պաշտ. հաղորդագրութիւն.

Արտաւայում ամբողջ օրը տեղի էր ունենում կռիւ լեռնալանջերի վրայի խրամատների մէջև։ Ժիվանշիից դէպի հարաւ թշնամին հարաւորութիւն ունեցաւ նորից ամրանալ հինգ ճանապարհների ցանցի վրա, իսկ միւս տեղերում նա վանվեց, չը նայած կատաղի կրնակի յարձակումներին։ Առանձնապէս ուժեղ թնդանօթային կռիւ տեղի էր ունենում Սոմմայից դէպի հարաւ Լիգոնս և Շոն շրջաններում, էն դեռից դէպի հիւսիս, Միլդ հովտում և էնն օ Մարնան միացնող ջրանցքի վրա։

Մենք ցած իջեցրինք թշնամու մի աէրոպլան։ Նրա մէջ գտնվող երկու օֆիցերը գերի բռնվեցին։

Շամպանիում թշնամին նորից ռմբակոծեց մեր դիրքերը և մեր թիկունքը՝ խեղդող գազեր պարունակող ռումբերով. մեր արտիլերիան եռանդով պատասխանում էր նրան։

Արգոնի անտառում մեր ծանր թնդանօթները ռմբակոծեցին Բոնի կողմից առաջացած թշնամու զօրաբաժին։

Վոգէզներում մենք տաք կռիւից յետոյ վանեցինք թշնամու յարձակումը։

Կատաղի թնդանօթային կռիւ տեղի է ունենում Հարտման-Սվէյլերկոֆի մօտ։

ՊԱՐԻԶ.—Ցերեկվայ պաշտօնական հաղորդագրութիւն.

Բաւականին ուժեղ թնդանօթաձգութիւն էր տեղի ունենում Արտաւայում ամբողջ զօրաճակատի վրա։ Ռումբերով և պայթուցիկ նիւթերով կռիւ տեղի էր ունենում Կենենվէր և Վիլ-սիւրլին շրջաններում, նաև Նովօրոնսի սարահարթում։

Շամպանիում շարունակվեց թնդանօթային կռիւը։ Արգոնների մոտ նոյնպէս կռիւ էր ռումբերի օգնութեամբ։ Վերդունում մեր թնդանօթների կրակը գերմանական մի զինագրքի մէջ ուժեղ պայթում առաջ բերեց։

Մեր օդաչուները 50 ռումբ նետեցին Բիամ կայարանի վրա։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
22 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ.—Ֆենանների մինիստր Բարկը լսորդակցեց Բրիբոյի հետ և ընդունվեց հանրապետութեան նախագահից։

ԼՕՆԴՕՆ.—Բոշիլլի նախագահութեամբ հիմնվեց մի մասնաժողով ազդեցիկ հրէաներից՝ կազմելու մի ֆոնդ յօգուտ պատերազմից վնասված ռուսական հրէաների։ Արդէն եղել են մի քանի նուիրաբերութիւններ 500-ական ֆունտ, նաև 5000 ֆունտ Բոշիլդից։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Սերբիայի դէմ Գերմանիան և Աւստրիան կենտրոնացրել են 250,000 զինուոր։

◆ Բուլգարական զօրքերը կենտրոնացել են բոլգարական սահմանում։ Ըստ երևոյթին Բուլգարիան դէմ է գնալու Ֆէրդինանդի մտադրութիւնին։

◆ Բոլգարիան պարտաւորվել է Գերմանիայի հետ յարձակվել Սերբիայի վրա և տալ իր երկաթուղիները գերմանացիներին. իսկ Գերմանիան պարտաւորվել է դիմադրել Բուլգարիային, թոյլատրելով բոլգարներին գործել ազատօրէն Յունաստանի վերաբերութեամբ, զինավարել Սև-ծովի ափի պաշտպանութիւնը և այլն։

◆ Սերբական սահմանի վրա սկսվել են ռազմական գործողութիւններ գերմանացիների դէմ, որոնք պարտվում են։

◆ «B. B.»-ն հաղորդում է. «Թայմսի» թղթակիցը տեղեկացնում է, որ սեպտեմբերի կէսերին պրինց Լէոպոլդը այցելեց Վարշավա։ Այդ օրը դադարեցին լոյս տեսնելուց բոլոր լրագիրները, արգելվեցին մասնաւոր ժողովները և թաղումները. հեռագրական կայարաններում դադարեցվեց մասնաւոր հեռագիրների ընդունելութիւնը. հեռախօսը դադարեց գործելուց։ Այդ բոլոր ձեռնարկութիւնները համոզեցին լեհերին, որ այդ օրը Վարշավայում կայզէրն էր։

◆ Բոլգարական բոլոր քաղաքներում կոչեր են տարածված, յորդորելով նուիրել տաք հագուստեղէն զօրքի համար։

◆ «P. B.»-ն հաղորդում է, որ անգլո-ֆրանսիական նաւատորմը լողում է Եգէյեան ծովում՝ բոլգարական ծովափի մօտ։

◆ «P. B.»-ն հաղորդում է, որ գերմանական և աւստրիական դեսպանները Բուխարէստում կարուկ կերպով յայտնել են, որ Ռումինիայի զօրահանութեան դէպքում աւստրո-գերմանական զօրքերը անմիջապէս ներս կը խուժեն Ռումինիա։

◆ Գերմանական մամուլը պնդում է, որ Բոլգարիայի հանդէս գալու դէպքում Յունաստանը գրաւելու է Դեդէագչին և Դիրլանը և արգելք է լինելու դաշնակիցներին՝ զօրքեր ափ հանել։

ԲՈԼԳԱՐԻԱՆ, ՅՈՒՆԱՍՏԱՆԸ ԵՒ ՌՈՒՄԻՆԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
22 սեպտեմբերի

ՍՕՖԻԱ.— Ռուսական ուլտիմատումը միսսիայի առաջին քարտուղար Սաբլերը յանձնեց մինիստր-նախագահ Բաղդասարովին սեպտեմբերի 21-ին, կէսօրվայ ժամը 4-ին։

Կառավարական լրագիրները, չը նայած զինուորական գրաքննութեան, ամեն օր հաղորդում են, թէ իբր համաձայնութեան պետութիւնների հետ բանակցութիւնները շարունակվում են և պետութիւնները նոր առաջարկութիւններ են պարտադրում՝ Բոլգարիայի պահանջներին բաւարարութիւն տալու մտքով—ամբողջ Մակեդոնիան իսկոյն գրաւելու վերաբերութեամբ։ Այդ օրինակ տեղեկութիւնների նպատակն է քնեցնել հասարակական կարծիքը, ապարատել անարգել զօրքերին կենտրոնացնելը և այն տպաւորութիւնը ստեղծել, թէ այդ գործելակերպը ոչ միայն պարտաւանք չէ առաջ բերում, այլ և կատարվում է քառեակ համաձայնութեան պետութիւնների հաւանութեամբ։

Ճանապարհորդական հաղորդակցութիւնը երկաթուղիներով դադարել է զօրքերի տեղափոխութեան պատճառով։

ՍՏՕԿՀՕԼՄ.— Բերլինից հաղորդում են, որ ռուսական ուլտիմատումի տեղեկութիւնը տարածվեց արտակարգ յաւելուածներով։ Գերմանական արտաքին գործերի մինիստրութիւնը բացատրում է, որ այժմ Բոլգարիան բացորոշ կը կանգնէ Գերմանիայի կողմը։ Ինչ վերաբերում է Յունաստանին և Ռումինիային, Գերմանիան և Բոլգարիան պատրաստ են ամեն տեսակ պատահականութեան։ Լրագիրները կարծում են, որ դիւանագիտական յարաբերութիւնները խզելուց յետոյ պէտք է յայտարարվի պատերազմ։

ՌՈՒԽԱՐԷՍՏ.— Սոֆիայից տեղեկացնում են, որ ֆրանսիական, իտալական և մեծ-բրիտանական դեսպանները հրահանգ ստացան գործել Ռուսատանի ներկայացուցչի հետ լիակատար համաձայնութեամբ։

ՅԷՏԻՆԻԷ.—Այստեղ ստացված տեղեկութիւնների համաձայն, Ֆրանց-Յոզեֆի կայարը սեպտեմբերի 16-ին հեռագիր ուղարկեց բոլգարական արքային՝ ողջունելով նրա վճիռը, որ հանդէս է գալու կենտրոնական մեծ պետութիւնների օգտին, որպիսի քայլը պէտք է ստեղծէ մեծն Բոլգարիա։ Մի ուրիշ հեռագրի մէջ, որ ուղարկվել է երկու օր յետոյ, աւստրիական կայարը իր դժգոհութիւնն է յայտնում այն առիթով, որ բոլգար կառավարութիւնը ատատանվում է և կանգ չէ առնում Ֆէրդինանդի հասցէին սպառնալիքներ կարդալու առաջ։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
22 սեպտեմբերի

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

«Զօրաճակատի մի քանի մասերում տեղի են ունենում թնդանօթային կռիւներ։ Թշնամին մեծ քանակութեամբ ռումբեր արձակեց Կօզմօնս երկաթուղային կայարանի դէմ, բայց ոչ մի վնաս չը պատճառեց։

«Իլոնցօ հովտում եկած յորդ անձրևները չը նուազեցրին մեր զօրքերի լաւված զօրաղթութիւնները»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱԿ

I

Թիֆլիսի նուիրատուների

(Յօգուտ Ս. Նազարեանի ձրի ճաշարանի)

(Տես «Մշակ» № 181)

Ա. Դաւթեան 3 ր., Մ. Տ. Յարութիւնեան, Ա. Քալաշով 2-ական ր., Թ. Յարութիւնեան, Ա. Դէմուրով, Օ. Մելքոնեան, Ա. Մարկոսով, Դ. Մարկոսով, Մ. Աղանեան 1-ական ր., Ն. Մելքոնեան 80 կ., Գ. Դաւթեան, Պ. Դիմաբշեան 20-ական կոպէկ։ Գումարը՝ 14 ր. 20 կ.։

II

Բէնդէր-գեազի (Պարսկաստան) նուիրատուների (Յօգուտ հայ փախստականների)

(Տես «Մշակ» № 190)

Ն. Տ. Պետրոսեան, Թ. Կարապետեան և ընկ., եղբ. Թումանեանց 50-ական ր., Ն. Վարդապետեան, Դէբուա 25-ական ր., Կանուէվիչ 15 ր., Ս. Նանագանեան, Գ. Աւետիսեան, Մ. Կարապետեան Ա. Մելիք-Օսէփեան 10 ական ր., Ահմադ խան 9 ր., Ի. Սեդրաշվիլի, Ն. Բէգլարեան, Դ. Համզայեան, ընկ. «Պարիզ», Ա. Նասիբեան, Ա. Զօլովխարեան, Բ. Տէր-Յակոբեան, Գ. Աֆիֆադիլեան 5-ական ր., Ա. Երզնկեան, Շիրաս-

կով, Կասով, Ս. Երնզակեան, Գ. Եղիազարեան, Վ. Բժշկեան 3-ական ր., Բ. Նասիբեան, Զօհրապ-խան, Ա. Մարկովիչ, Հայ 3-ական ր., Ց. Երզնկանեանց, Վառաբէվ, Ս. Երզնկանեան, Սմիրնով 1-ական ր։ Գումար՝ 479 ր. 85 կ., որից պոստի ծախս արված է 1 ր. 25 կ. և խմբագրութեան ուղարկված՝ 478 ր. 60 կ։

ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐ ՊԷՏՔ Է ԴԱՐՁՆԵԼ

—

Թէև մեծ մասամբ թղթի վրա, բայց և այնպէս կենսական մթերքների, կրթական և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԷՏԻ ԵՒ ՏԱՌԱՊԱՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ *)

(Այց թիւրքահայ փախստականներին)

IX

Եթէ մեր հարևանները կամ հեռաւոր օտարները հարցնեն, թէ ինչպէս է, որ մենք հայերս անկարող ու ապիկար զանվեցինք Կովկասում ապաստան գտած թիւրքահայ փախստականների սոսկ ֆիզիկական կեանքը փրկել և մասսայամահացութեամբ գերեզման իջան տասնեակ հազարաւորներ, մենք միայն մի պատասխան կարող ենք տալ։ այն սովորական, շաբլոն պատասխանը, որ տալիս ենք մենք ամեն անգամ, երբ մեզ հարցնում են, թէ ինչու չեն առաջադիմում հայ մտաւոր կուլտուրայի գործիները, թէ ինչու կաղում, ետ են մնում հայ ազգային-հասարակական սեփականութիւնները ու ստացուածքները։ Որովհետև մեր իրականութեան տիրող դասակարգը՝ նիւթական կուլտուրայի տէրն ու խնամակալը—հայ բուրժուազիան—անփոյթ ու անտարբեր է դէպի իր ազգային կեանքի երևոյթներն ու եղելութիւնները։

Այդպիսի պատասխանով մենք հայերս ձգում ենք սովորաբար հասարակական պատասխանատուութեան ամենածանր բեռը տիրապետող դասակարգի վրա։ Եւ այդ պատասխանն ունի իր լիուլի արժէքը նաև ներկայ դէպքում։

Մենք շատ էլ պահանջկոտ չենք։ Եթէ Թիֆլիսում և Բագուում կենտրոնացած հայ կապիտալիստները շտապէին դեռ գաղթականական հոսանքի սկզբում նիւթական, բժշկական և տեխնիկական բոլոր պահանջվող պարագաներով զօտեպնդված մի ստուար յանձնախումբ ուղարկել փախստականների կենտրոնական բանակատեղին՝ Էջմիածնի բոյսը, շատ բան կը փրկէին։ Այդ յանձնախմբի ամենագլխաւոր, եթէ ուզում էք՝ միակ փրկարար միտքն պիտի լինէր հետևեալը. ազատել փախստականներին վանքի պատերի նեղ, ճնշված միջավայրի բացօդեայ կենցաղից և կառուցանելով վրանները կուլտուրական հաստատութիւնների խնդիրները միշտ էլ առօրեայ հոգածութիւնների առարկայ են դառնում քաղաքի և ժողովրդի շահերի պաշտպանների կողմից։ Սակայն պէտք է խոստովանել, որ ընակարանային հարցը միանգամայն անուշադրութեան է մատնված՝ և 95%-ը վարձողները ուղղակի անքնում են նրա բեռան ծանրութեան տակ։ Եւ թւում է, թէ այս խնդիրը ամենևին չէ հետաքրքրում մեր քաղաքի պատրիոտներին ու հոգատարներին։ Սրանց աչքերին իսկի չեն երևում անտէրերի անվերջ, անյաղուրդ և ծայրայեղ կամայականութիւնները։

Վերջին տարիներում մանաւորապէս, մանաւանդ այս տարի, ընակարանների քրէհները առասպելական չափերի են հասել, որոնց անմատչելիութիւնն ևս առաւել մանաւանդ շշմեցրել է անկարողներին և միջին դասակարգին։ Եւ այսօր վարձողների ընակարանների վարձը աւելի է, քան նրանց ընտանիքների պարենաւորման ամբողջ ծախսը։ Այն մարդը, որը ամսական հաշիւ 60—70 բուբլի արդիւնք, ոռճիկ և կամ աշխատանք ունի, նրա ուղիղ կէսն այսօր ընակարանի վարձին է գնում։ Այս դեռ ոչինչ։ Ներկայ անտեսական ծանր պայմաններում տանտիրոջ հետ ուղղակի խօսել չի լինում. քրէհները ժամանակին հաւաքում է նա, սակայն առանց իր տան պակասները լրացնելու և կամ հոգալու. և եթէ այս մասին պահանջ ես յայտնում, պատասխանում է. «Մնացած կանեմ, բայց քրէհը կաւելացնեմ»։

Գարնանը մի օր ուժեղ քամուց և կարկտից Թիֆլիսի բազմաթիւ տների հատակ և թանգարժէք ապակիները բոլորովին փշրվեցին։ Այդ ժամանակ եղան տանտէրեր, որոնք իրանց տան ապակիները չէին նորոգում, ասելով թէ դա իրանց պարտքը չէ. եթէ այդ ծախսը հոգան, տան քրէհը կաւելացնեն։ Ասել է թէ՝ իրանց տան պակասը էլ տունը քրէհողի հաշիւն է կատարվում։

Ու պէտք է ասել, որ այսպիսի անթիւ կուրիոզները անտէրերի կողմից օրինակաւորութեան կարգն են անցել, օրի դէմ գնացողը կամ իր երեսի արտուով՝ կամ թէ օրէնքի օյժով դուրս պէտք է գնայ ընակարանից։

Ասածներից պարզ է, որ անտէրերի անդթութեան չափ ու սահմանը անցել է, որոնց համար նպատաւոր առիթները մանաւանդ միշտ էլ կան ու կան։ Նրանք տեսնում են, որ ժողովուրդը տարէ-տարի հսկայական չափերով աւելացնում է. իսկ այս տարի էլ այդ չափը արդէն ահռելիութեան է հասել. ապա ուրեմն էլ ինչու չը մաշկել ժողովրդին։ Եւ անշուշտ, երբի կը գայ մի օր, երբ վարձողների ամբողջ ոռճիկն ու աշխատանքը տան քրէհին կերթայ։

Բայց մթթէ սա մի բարդ և անիրագործելի խնդիր է—կամ գուցէ քաղ. վարչութեան իրաւասութիւնից դուրս—որ նրանով զբաղվելու հարկ չէ տեսնվում։ Մթթէ այս մասին կառավարութիւնը կամ քաղաքային վարչութիւնը հոգատարութեան պարտականութիւններ չունեն։ Մթթէ ընակարանների համար համեմատական չափով չէ կարելի վարձ որոշել։

Ես կարծում եմ, որ տանտէրերի կապ-

ու բարակներ Վաղարշապատի բաց, ընդարձակ շրջակայքում՝ տեղաւորել նրանց այնտեղ։ Դրանով կարելի էր ապահովել փախստականների ֆիզիկական կեանքը ոչ միայն ընութեան արհաւիրքների զանազանակերպ «կապրիզներից» դէմ, այլ և հեռացնելով նրանց վարակված ջրերի վայրից՝ հնարաւոր կը լինէր նաև բաւարար թւով խոշոր կախոցներ դնել նրանց արմատդրութեան տակ և կազմակերպել էջմիածնի քանդանից առատորէն ջուր կրելու, եփելու և մատակարարելու գործը։

Դա, իրաւ, խոշոր ծառայութիւն կը լինէր՝ ոչ միայն առողջներին զերծ պահել վարակումների վտանգից, այլև տարների, գոնէ թեթև հիւանդների կեանքը փրկել։ Մինչդեռ իրանց ներկայ կացութեան պայմաններում փախստականներից ոչ միայն ծանր ու թեթև հիւանդներն են յաջորդական կարգով և անդառնալի կերպով մահվան ճամբան բռնում, այլ և առողջներն են վարակվում և նոյն օղերգութեան մատնվում։

Բայց Թիֆլիսի և Բագուի մեր երևելիները զլացան այդ գերազանց արժէքալից ծառայութիւնը կատարելու։ Նրանք փոխադրեցին միայն Կաթողիկոսի անունով իրանց «բարեգործական բուբլիները» և դրանով փակեցին ամեն մի հետաքրքրութիւն ու մասնակցութիւն։ Մինչդեռ էականը այդ գումարները չէին, և եթէ միլիոններ էլ տեղային Էջմիածին, միևնոյն է, դրութիւնը պիտի մնար նոյնը։ Կրկնում ենք՝ կարիքը դրամի մէջ չէ, այլ զորի տեխնիկական կազմակերպութեան մէջ։ Էջմիածնի մթաքաններին իրանց կոչումից ու ձեռնհասութիւնից միանգամայն վեր գործ է յանձնարարվել։ Էականն այն է, որ գործի գլուխ պիտի կանգնէին պրակտիկ և տեխնիկ այժեր, փորձված, հմուտ կազմակերպիչներ, որպէսզի կարողանային ծաւալել ժողովրդական խոշոր մասսաներ տեղաւորելու, կերակրելու և խնամելու հարկաւոր ապարատներ։

Կովկասի հայ բուրժուազիան կեանքի չը կոչեց իր պրոֆէսիոնալ ինտելիգենցիայից բիզնեսին կարելի է՝ և պէտք է սահման դնել։ Դրա համար կարելի է նշանակել կամ ընտրել յատուկ մի մասնաժողով, որ պաշտօն ունենար տեղին, թաղին և ընակարանին համեմատ վարձ նշանակել։ Եթէ կենսական մթերքների գները սանձելու մասին քաղաքը մտածում և հոգս է տանում, ինչու նոյնը չէ կարելի անել նաև ընակարանների քրէհները կարգաւորելու մասին։

Ժողովուրդը կեղեքվում է, ժողովուրդը հարստահարվում է և կարծես նա տէր ու տերական չունի։ Պէտք է նրա այս մեծ վէրքի մասին էլ մտածել, պէտք է նրա այս խոցին սպեղանի դանել, պէտք է անատէրերի ագահութեանն ու շահատակութեանը վերջ տալ։

Բեռեռ

ՀԱՑ ԹԱՏՐՈՆԻ ՑԱՒԵՐԻՑ

I

Խիստ ճնշվում է իմ հոգին այն հանգամանքից, որ երբ կամենում եմ խօսել հայ թատրոնի մասին, առաջս պատկերանում են նրա անհաշիւ ցաւերը, նրա քաջասային սոսկալի վիճակը։

Մի հիմնարկութիւն յիսուն տարուց աւել գոյութիւն ունենայ, և սակայն դարձեալ խօսել նրա ցաւերի մասին։ Խոստովանենք որ սա տխուր երևոյթ է. բայց ինչ արած, սա մեր դառն իրականութիւնն է. և մթթէ նման վիճակը թագաւորում է լոկ հայ թատրոնի շուրջը ստեղծված մթնոլորտում. ոչ, սա մեր ընդհանուր ազգի ցաւն է... Դաւերի, ըիրա «հոգ»-ի արտայայտութիւնների հետևանք։ Ո՞ւմ յայտնի չէ հայի «հոգ»-ը, դիկտատոր լինելու տենչը։

Սակայն էլ աւելի ցաւ է պատճառում ինձ, երբ հայ թատրոնին սպառնալու կոչվածներս գեղեցիկը մի կողմ ձգած մեր նեղ ապրումներով ենք առաջնորդվում։ Ճիշդ է, տենչը դէպի փառքի դափնին ուժեղ է արտիստի սրտում, բայց դրա ուղին պէտք է ընթանայ մաքուր և ուժեղ ազատ մրցման շաւղով։

Մեր սկզբունքը, մեր դաւանանքը բացառապէս շար նախանձն է. բայց մթթէ դա վայել է արտիստի նուրը, զգայուն օգուն։ Ի հարկէ ոչ։ Բարի նախանձը, յաւից լաւ լինելու զգացումը երբէք հարպատ չէ եղել մեր հոգուն։ Տապալել, ոչնչացնել, քանդել... և անպայման այդ նպատակին հասնելու համար դիմել եւ բռունցքի, եւ հեշտասիրութեան և խարամանկութեան ասուածներին...Այսօրվայ լաւ օրշումը յանկարծ քանդվում է, և մենք ամենքս զարմացած բացականչում ենք՝ «հեղբայր, այս ինչպէս եղաւ», և ապա աշխատում ենք դրա պատճառը օրոնել վերև յիշածս ամենազօրեղ երեք ասուածութեան մօտ։ Գրանելով դառնութեան աղբիւրը, ասում ենք՝ «էհ, եղբայր, ինչ կարող ենք անել» և հաշտվում ենք դառն իրականութեան հետ, կեղծ ժպիտը դէմքին դիմաւորելով յաղթողներին։

Ցաղթութիւն, փառաւոր յաղթութիւն...

Դերմանիան էլ է այսօր յաղթութիւն տանում, սակայն ազատութեան տենչացող առաջադիմութիւնը սոսկում է նրանից, որովհետև այդ յաղթութեան մէջ կորցրում է իր ազատ ոգու, ազատ զարգացման սաղարկութեան սպառնալիքները։

բանց հասարակական անտարբերութեան մէջ, թէկուզ ժողովրդական աւօրինակ առէնների հանդէպ։ Եւ միայն հայ անձնուէր կուլտուրարեգերն է, որ լարելով իր այժերի մաքսիմումը, յանուն հանրական բարիքի, մաքառում է ամենատեսակ խոչընդոտների դէմ։

Եղան մեր մէջ պարզամիտ հրապարակագիրներ, որոնք փախստականների հարցում սպասելով հայ բուրժուազիայից չունեցած բարեմասնութիւններ՝ յուսախաբվեցին և բարոյական ամենակարգի մակդիրներով խարազանեցին նրան։ Բայց քիչ կան հէնց դրանց շարքում այնպիսիները, որոնք արամագծորէն փոխում են իրանց ֆիրմը դէպի բուրժուազիան մի այլ մօտեցի, երբ նրա առաջ ծառանում է շահագործող կատեգորիան՝ իր կենսական պահանջներով։ Այդպիսի դէպքերում իդէոլոգիական հաւատարմատարութիւնը հասցվում է մինչև լակէյական խանարհութեան աստիճանը։

Սակայն միայն կովկասահայ բուրժուազիան չէ իր պրոֆէսիոնալ ինտելիգենցիայով, որի կրաւորական դիրքը փախստականների գործում արժանի էր բացասական քննադատութեան։ Ի՞նչ արին կովկասահայ ընկերութիւնները՝ իրանց շուրջ խմված և ղեկավարութիւնը ստանձնած հասարակական ինտելիգենցիայով։ Ի՞նչ արին ամենից առաջ Կովկ. Հայոց Բար. Ընկերութիւնը, Թիֆլիսի Հայ Կենտր. Կոմիտէն և Նպաստամատոյցը։ Ուրե՞ն նրանք ակտիվ ծառայութեան և շօշափելի արդիւնքների այն խոշոր պլիւսը, այն մեծ հասարակական երախտիքը, որպէսզի դրական գնահատութեան, լուսաւոր էջ գրաւելու արժանի լինեն նրանք փախստականների հարցում։

Կասկած չը կայ, որ հասարակական ապաւելիքներն ու պահանջները՝ դէպի այդ ընկերութիւնների գործունէութիւնը, իրաւունք ունեն աւելի խիստ լինելու։ Զի որ այդ ընկերութիւնները հասարակական ձեռնարկներ են՝ օժտված բարեգործական նպատակներով և գումարներով, և չէ որ նրանք օրն ի բուն կոչերով ու որոշումներով ազմկում են՝ ի լուր հանրութեան, փախստականների համար իրանց այս կամ այն անելիքի մասին։

Մենք բացարձակապէս անկողմնակալ ենք դէպի յիշեալ ընկերութիւններից մէկը կամ միւսը և նկատում ենք անաչառօրէն, որ նրանք չեն արել փախստականների համար այն, ինչ կարող էին և պարտաւոր էին անել։ Բարեգործական Ընկերութիւնը, այդ հնագոյն, խոշորագոյն և բազմաճիւղաւոր հասատատութիւնը փայլում էր իր հասարակ կատարեալ ձեռնպահութեամբ։ Իսկ Կենտրոնական Կոմիտէն և Նպաստամատոյց Ընկերութիւնը աւելի շուտ մրցում էին փողահաւաքի ձևերի և հրապարակական կոչերի մէջ, քան արդիւնաւոր գործունէութեան և շինարար ձեռնարկների մէջ։ Եւ իրաւ, մթթէ այդ ընկերութիւնների ողջ եռանդը պիտի ապաւէր գլխաւորապէս դէմ ժողովելու վրա, կամ մթթէ բաւարար կարելի է համարել նրանց ունեցած գործունէութիւնը. գործակալներ ուղարկել փախստականների կենտրոնացման վայրերը, օգնել նրանց զանազան իրերով և բժշկական պերսօնալի ոռճիկներով։ Զենք ասում պիտանի բաներ չեն սրանք. բայց դրանք չեն կարող գլխաւոր նպատակը համարվել այնպիսի կազմակերպված մարմինների, որոնք կեանքի են կոչվել յատկապէս փախստականների համար։ Այդ ընկերութիւններին յայտնի էին ժողովրդական ազգի չափերը, նրանք գիտէին էջմիածնում խմբված փախստականների գերեզմանափոր կենցաղավարելի մասին։ գիտէին նաև տեղում գործող մարմինների անձեռնհասութիւնը։ Եւ այնու ամենայնիւ ամենածանրակշիռ հարցի նկատմամբ նրանք նոյնքան անտարբեր ու անփոյթ գտնվեցան, որքան կովկասահայ բուրժուազիան։

Մթթէ թւածս ընկերութիւնները չէին կարող միացեալ ոյժերով էջմիածին ուղարկել բոլոր պարագաներով օժտված այնպիսի մի ստուար յանձնախումբ, ինչ յիշեցինք մենք վերև, հիմնապէս վերակազմակերպելու համար անկատար գործը և յատկապէս ապատելու փախստականներին բացասական կենցաղից։ Խմբված Կովկասի մայրաքաղաքում, ունենալով «Համուր կապերդ բարձրի հետ, կարող էին նրանք բարակներ

---

*ը խրախուսվեց և օրինակ չը վերցրեց գոնէ իր մօտվարքակ կոլեգաներից, տեղական հայ համայնքից, որի ձեռնարկը արժանի է ամեն մի գովքի ու յարգանքի։ Իր քթի տակ մասսայօրէն մահացող դժբաղդ զոհերի համար չարեց նա նոյն իսկ այն, ինչ արեց երկու տարի առաջ Բեռլինի հրէական համայնքը հեռաւոր անկիւնում տուժող իր ցեղակիցների համար *)։*

Էլ աւելի չափաւոր ու զիջող լինենք մեր պահանջների մէջ։

Կովկասահայ բուրժուազիան ապրիկոր զանվեց իր յատուկ միջոցներով, անկախ գործող ընկերութիւններից, գոնէ հիմնել 200—300 օրբերի համար մի ապաստարան՝ նրանց սնելու, խնամելու և կրթութիւն տալու նպատակով։ Զը գանվեց գոնէ մէկը հայ միլիոնատէր կապիտալիստներից, որ բարոյական ժեստ ցոյց տար և կեանքի կոչէր քաղցից մեռնող դժբաղդ փախստականների համար մի ճաշարան։ Եւ այն, ինչ կարող էր հեշտութեամբ անել հայ կրեսոսը, ինչ պարտաւոր էր անել հայ թեմի առաջնորդը, այսօր անում է մեր աչքի առաջ հայ գրական-հասարակական իդէալիստ գործիչը իր համարձակ ձեռնարկով (իմա Տ. Նազարեանի ճաշարանը)։

Սա կոյր պատահականութիւն չէ, այլ ամենաբնորոշ փաստերից մէկը մեր հասարակական իրականութեան մէջ։ Առաջին անգամը չէ, որ մամոնայի երկրպագուն՝ իբրև դրական ոյժի ներկայացուցիչ և Աւետարանի աշակերտ՝ իբրև սրբազործված մօրալի ներկայացուցիչ, հանկիստ ու անխոով բաղված փափուկ բարձի վրա՝ ջերմ համբերաշխութեամբ փայլում են ի-

---

) Բալկանեան պատերազմի ժամանակ Բերլինի հրէական համայնքը անգամներ զումարեց փոխադրեց և բժշկական ու հասարակական գործիչների արշաւախումբ ուղարկեց ռազմաբեմի այն մասերը, ուր տուժել են տեղական ոչխարները։ Իսկ փախստական հրէաներին պատսպարում, խնամում և նրանց համար աշխատանք էին հայթայթում Բերլինի և Վիէննայի հրէական համայնքները։ Բայց ինչ համեմատութիւն՝ մի քանի հարիւր հրէաների և հարիւր հազարաւոր հայերի միջև, սոսկ նիւթապէս տուած հրէաների և մասսայօրէն մահացող հայերի միջև։ Եւ այնու ամենայնիւ ապահով հրէութիւնը աւելի էր մտածում ընչազուրկ հրէաների մասին, քան ապահով հայութիւնը՝ մահացող հայերի մասին։ Սա փանատ չէ, այլ տխուր իրականութեան

*) Մանրամասն տես «Մշակ» թիւ 206։

**) Մենք ոչ մի ինչպիսի ստուգութիւն չենք անում։ Ընկերութիւնների գործունէութիւնը ստուգելու իրաւունքը ունի միայն Ներքին Գործոց Նախարարութիւնը։ Մենք ասում ենք միայն մեր կարծիքը։ Ինչպէս ասացինք, մենք անկողմնակալ ենք։ Մենք ոչ մի անձնական թշնամանք չունենք։ Մենք ասում ենք մեր կարծիքը։ Ինչպէս ասացինք, մենք անկողմնակալ ենք։ Մենք ոչ մի անձնական թշնամանք չունենք։ Մենք ասում ենք մեր կարծիքը։

բայց ամենքը չէ բաւականացնում երեխին ուստի նա սովելուց էլ աւելի ճչում է։ Մէկը չէ, երկուսը չէ. դրանց թիւը հարիւրներ, հազարներ են՝ խորը թշուառութիւնների մէջ շաղախված...

— Ի՞նչպէս էր կերակրվում—դիմեցի ես մէկին։

— Ոչինչ, ազգը չէն մնայ. հաց բաւական ստանում ենք, միայն մնացողն է պակաս։ Գլխաւորապէս նեղվում ենք թացանից. կաթ, մածուն, պանիր, իւղ և այլն ձեռք չէ ընկնում։ Դրանց մենք աւելի սովոր ենք, քան մսեղէն կերակուրներին։ Այդ էլ եօլա կը գնայ, ասա մի վերջ լինի մեր չարքաշութեան, կուրն աւարտում արվի, խաղաղութիւնը տիրի, որպէս զի մենք էլ ապահովվածէս մեր երկիրը դառնանք, վայելենք մեր քրտինքի քաղցրութիւնը, թէ չէ՝ օտար տեղ թափառելով բան չի դուրս գայ, և մենք, բոլոր քոչւորներս տաքի տակ կը կորչենք... Ա՜խ եարաբ աչք կունենա՞նք մենք տեսնելու մեր վաթանը,—վերջացրեց խօսակիցս խորը հառաչանք քաշելով...

— Ապահով եղէք. այժմ կուրն պայմանները լաւանում են. այժմ ռուսաց քաջարի զորքերը՝ իրանց նոր Գերագոյն Հրամանատարի ղեկավարութեամբ՝ առաջանալու են դէպի Թիւրքահայաստանի խորքերը և ձեր երկիրը սրանից յետոյ ապահով կը լինի,—միամտացրի ես թշուառ խոսակցիս և հեռացայ։ Գ. Սինանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սովի ուրուականը

Շնող գիւղ, 12 սեպտ.

Քանի դեռ հունձը նոր էր վերջացած, իսկ կալերը դեռ չէին սկսված, յոյս կար, որ հացի բերքը կիսով չափ գոնէ բաւարար կը լինէր, սակայն երբ կալերն արդէն վերջացած են և ստացված արդիւնքի հաշուանքը պարզված է, որոշակի կերպով կարելի է ասել, որ հացի բերքը չափից դուրս սակաւ է և սովը անխուսափելի է, եթէ ժամանակին ձեռք չառնվեն հնար եղած միջոցներ։ Հասարակութիւնը իրաւունքն մէջ է, սովի երկիրը հանգստութիւն չէ տալիս նրան։ կիրակի հասարակական ժողով է լինելու տիրող դրութեան մասին խորհրդակցելու և կազմած բանաձևով կառավարութեանը տեղեկացնելու։ Հարց կայ նաև հաւաքական օյժերով օրէկ տեղից ցորեն բերելու՝ իր գնով գիւղացիներին վաճառելու նպատակով։ Այս գովելի միտքը սակայն անիրագործելիութեան չափ դժուարանում է, երբ ի նկատի ես առնում նախ վագոն ստանալու դժուարութիւնը և երկրորդն էլ այն, թէ օրտեղից կարելի է ձեռնտու պայմանով ձեռք բերել ցորեն կամ ալիւր։ Հացի պակասութիւնը միայն մնդանում չէ, կարիքը ընդհանուր է համարեա, ուստի անհրաժեշտ է, որ Հայ Գիւղատնտեսական Ընկերութիւնը, որքան էլ նա ծանրաբեռնված լինի անխուսափելի հոգսերով, լուրջ կերպով զբաղվի այս խնդիրներով։ Նա կարող է բանակցութեան մէջ մտնել խոշոր ֆիրմաների հետ, տեղեկութիւն հաւաքելով տիրող գների մասին մէջնորդել և տեղեկացնել իրան դիմող գիւղացիներին, թէ օրտեղից և ինչ գնով կարելի է մեծ քանակով ցորեն կամ ալիւր ստանալ, իր վրա վերցնելով ի հարկէ նաև վագոններ ստանալու միջնորդութիւնը։ Այլապէս մեր ամայացած գիւղերը, որ սիրով խնամում են իրանց մէջ գտնվող բազմաթիւ գաղթականներին, հիմնովին քայքայվում են և զրկվում թէ ապրելու և թէ ապրեցնելու հնարաւորութիւնից։

Մեր գիւղի այգիները այս տարի բաւական նշանակութիւնով ամլացած են. չը կայ ոչ խաղող և ոչ էլ օրէկ տեսակի միրգ։ Աւատ է միմիայն հունը, որը թէև անտառներում ու այգիներում կարմրին է տալիս, բայց եղած չեղած մի հաշիւ է, որովհետև ոչ արտահանվում է օրէկ կողմ և ոչ էլ տեղում օգտագործվում։ Այսպիսով դրութիւնն աւելի ևս ծանրանում է, որովհետև հացի պակասը լրացվում էր այգիներից ստացված եկամտով, իսկ այժմ ոչ մէկը կայ և ոչ էլ միւսը։

Մեզանում գոյութիւն ունեցող փոխատու-խնայողական ընկերութեան վարչատան դուռը շաբաթ օրերով—երբ փող է բաց թողնվում—կատարեալ ուխտատեղի է նման լինում։ Ամեն մէկը շտապում է մի քանի ռուբլի ստանալ օրէկ տեղից ցորեն գնելու։ Ընկերութիւնը փող տալիս է 12 տոկոսով, ապատելով գիւղացիներին վաշխառուներին 50-ական տոկոսներ վճարելուց։

Երէկ գիշերվանից «Վալվար» տարի գլուխը ծածկված է ձիւնով։

Աւելորդ չէր լինի, եթէ Գիւղատնտեսական Ընկերութիւնը մի յատուկ ժողով դուռմարէր գաւառացիների մասնակցութեամբ գիւղացիութեանը սպառնացող սովի մասին խորհրդակցելու և միջոցներ ձեռք առնելու նպատակով։ Բ. Մկրտումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ ժամանեց Կովկասի Փոխարքայ Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչը։ Ընդունելութիւնը բաւական փառահեղ էր։ Մանրամասն նկարագրութիւնը կը տանք վաղվայ համարում։

◆ Քաղ. դումայի օրօրման համաձայն, Վարշավայի պոլիտեխնիկումը Թիֆլիս փոխադրելու առիթով, քաղաքացուները հետաքրքիր հեռագիրն է ուղարկել առանձին և արդիւնաբերութեան մինիստր Իշխան Շախովսկիին. «Ի լրումն նախկին միջնորդութեան, Թիֆլիսի քաղ. դուման երէկ օրոշեց Վարշավայի պոլիտեխնիկական ինստիտուտի կահաւորութեան համար բաց թողնել 150,000 ռուբլի և յատկացնել բոլոր անհրաժեշտ շէնքերը, պոլիտեխնիկումը Թիֆլիս փոխադրելու դէպքում։ Նաև յատկացնել դումարներ պրոֆեսորներ ուղարկելու համար։ Համապատասխան առաջադրութեանը ընթացք կը տրվի։ Մեր քաղաքում կատարեալ հանգստութիւն է տիրում. այստեղ ապատատնել են շատ հատատութիւններ փոխադրված ուրիշ վայրերից»։

◆ Կառավարութեան թոյլատրութեամբ Թիֆլիսի հայ եկեղեցիների միաբանութիւնների ու հոգաբարձութիւնների յանձնաժողովը յօգուտ «Թիֆլիսի Հայ Ծխական Համայնքի առաջին օգնութեան» առաջիկայ հոկտեմբերի 20-ին կազմակերպում է միօրեայ ժողովարարութիւն «Լուսաւոր Թերթի» վաճառումով։

◆ Նախընթաց օրը Ամերիկայից Թիֆլիս եկան 260 հայ կամաւորներ։ Երէկ մեկնեց նրանց մի մասը Երևան։

◆ Քաղաքի կազմակերպած չորրորդ սանիտարական և ապրանքատար խումբը պատրաստ է արդէն և այս օրերս կը մեկնի ռազմաբեմ։

◆ Քաղաքների Միութեան Կովկասեան ճիւղի բիւրօն ձմերային արշաւանքների համար տաք հագուստների և կօշիկների պատրաստութիւն տեսնելով Մոսկվա աւղարկեց բժիշկ Մարգարեանին հարկաւոր երերը գնելու։ Այժմ բժ. Մարգարեանից ստացվել է մի հեռագիր, թէ Մոսկվայում գները շատ բարձր են և ամեն բան գտնել և գնել անկարելի է։

◆ Քաղ. Դումայի այն իրաւասուները, որոնք քաղաքի կողմից նուէրներ են առրել կովկասեան ռազմաբեմ՝ զինուորներին բաժանելու, այս օրերս հրատարակելու են այդ նուէրների հաշուետուութիւնը։

◆ Առաջիկայ հոկտեմբերին Թիֆլիսում կը կայանայ կովկասեան մեղուապահների համագումարը, նախաձեռնութեամբ Մեղուապահական Ընկերութեան։ Համագումարը քննելու է մի շարք հարցեր, թէ ինչպէս կազմակերպել մեղրամոմ գնելու և մեղրը առանց միջնորդների սպառելու գործերը։ Որոշված է այդ խորհրդակցութեանը հրաւիրել Կովկասի գիւղատնտեսութեան վերատեսուչ Ս. Ն. Տիմօֆէեվին և ներկայացուցիչներ ուղղափառ և հայ հոգևորականութիւնից և տեղական Գիւղատնտեսական Ընկերութիւնից, նաև մանր վարկի վերատեսուչներին։

ՄԱՄՈՒԼ

ԿՈՎԿԱՍԻ ՄԱՄՈՒԼԸ ՆՈՐ ՓՈԽԱՐՔԱՑԻ ՍԱՍԻՆ

Պաշտօնական «Кавказъ»-ը գրում է.

Մենք օրաթերթ ենք և հպարտանում ենք նրանով, որ մեր երկրի կառավարութիւնը տրվել է, ամբողջ աշխարհից արդէն նկատված և գնահատված, Մեծ Իշխանի առնական ձեռքը։

Վրաց «Սաքարթվելօն» ասում է.

Բարի ղեկավարը, իմաստուն և փորձված կառավարիչը—բաղդաւորութիւն է երկրի համար։ Ինքը վրաց ժողովուրդը Մեծ Իշխանի մէջ տեսնում է բարի ղեկավարի, և հաւատացած է, որ Ն. Կ. Բ. բարեացակամ վերաբերմունք ցոյց կը տայ երկրի փոքրիկ ժողովուրդներն և չի համակրի նրանց պատական իրաւունքների ոտնահարման։ Վրաց ժողովուրդը գիտէ այդ և ակնկալ ողջունում է Մեծ Իշխանին և դիմաւորում է Նրան յոյսով և ցնծութեամբ։

Վրաստանը այսօր համեստ է իր ծառայով և իր պակասութեամբ, բայց նա միշտ այդպէս չէ եղել։ Նրա կուլտուրան ընկել է, նրա ձայնը թոյլ է, քաղաքական արժէքը մեծ չէ, լուսաւորութիւնը զրկված է օյժից և կենսունակութիւնից, բայց, կրկնում ենք, միշտ այդպէս չէ եղել նա։ Եղել է ժամանակ, երբ Վրաստանը միակ աստղն պէս փայլել է ամբողջ Անդրկովկասում, երբ նա միակ տիրապետողն է եղել Սև-ծովից մինչև Կասպից ծովը, Կովկասեան լեռնաշղթայից մինչև Արաքսը։

Վրաց ժողովուրդը ունի և՛ օյժերև՛ ընդունակութիւններ առաջադիմութեան գործի համար։ Պէտք է դէռները լայն բանալ նրա թաղված օյժերի առաջ, պէտք է վերացնել այն մթնոլորտը, որ նեղում է նրա շարժման, և այն ժամանակ ժողովրդական օյժերը հրաշքներ կը գործեն ի բաղդաւորութիւն մեր երկրի և կայսրութեան։

Մեծ Իշխանի, որպէս Թագաւորի Փոխարքային, Վրաստան գալու հետ վրաց ժողովուրդը կապում է հէնց այդպիսի յոյսեր։ Նա կարծում է, որ Մեծ Իշխանը, փոքր ժողովուրդների իրաւունքների համարաւորները, կապանք չի դնի վրացիների պատական իրաւունքների վրա, այլ մեր ժողովուրդը կը կանգնեցնի այս ճամբի վրա, որը կը հասցնի մեզ և կայսրութեանը ընդհանուր բաղդաւորութեան։ Դարաւոր կաղնու հզօրութիւնը չի թուլանայ, եթէ նրա ստուերում կը ծաղկի գարնան մանիշակ. բայց այդ նոյն մանիշակը, գլխիկոր ու թոշնած, ոչ օգին բաւականութիւն չի պատճառի։

«Тиф. Листокъ» նկատում է.

Այսուհետև կովկասեան երկրի բոլոր ակնկալութիւնները ուղղված են Մեծ Իշխանին, որի պետական խելքը և փորձառութիւնը կը թելադրեն նրան, թէ ինչ է անհրաժեշտ Կովկասին և թէ օրէնսդրական ինչ առաջադրութիւններ պէտք է առաջին հերթի դրվեն։

«Кавк. Сл.»-ն գրում է.

Աղդաբնակութիւնը այսօր դիմաւորում է Մեծ Իշխանին վստահութեամբ և յուսով, որովհետև այն անձը, որի ձեռքին էր գտնվում Եւրոպայի բաղդը մի ամբողջ տարի, չի կարող վստահութեամբ չը վերաբերվել Կովկասի հասարակական շերտերին, Կովկասի, որի որդիները քաջաբար կռուում են ռուս բանակի զանազան մասերում։

Իսկ «Закавказская Рѣчь»-ը հնարաւոր է համարել այսպիսի տողեր.

Կովկասի վրացիները և թուրքերը, իբրև հարաւային ժողովուրդներ, Մեծ Իշխան Փոխարքայից սպասում են վստահութիւն դէպի իրանց...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՓԵԱՆ

Բաց նամակ պ. Գ. Փիրումեանին

Թիֆլիս, 22 սեպտ.

Վարդանանց տօնի օրը, պ. Բ. Ասրեանի ընակարանում՝ ճաշկերոյթի ժամանակ, դուռ մի փոքրիկ դումար ժողովեցիք յօգուտ գաղթականների, որը խստացաք յանձնել «Մշակի» խմբագրութեան։ Ճաշկերոյթին ներկայ գտնվողներից մի քանիսը երկար սպասելուց յետոյ՝ դիմում են ինձ և խնդրում իմանալ, թէ ե՞րբ, ում է յանձնված վերոյիշեալ գումարը, և եթէ յանձնված է, երևի կունենաք արդարացուցիչ վկայական, քանի որ «Մշակի» նուիրատուների ցանկում չը կայ։ Սրանով դիմում եմ ձեզ և խնդրում, ի միամտութիւն նրանց՝ նուիրատուների, հաշիւ տալ մամուլի միջոցով։

Նուիրատուներից մէկը

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Բաշտ, 11 սեպտ.

Թիւրքահայ գաղթականներին օգնելու նպատակով Բաշտում կազմված է՝ Բաշտի Հայ Կանանց Կոմիտէի նախաձեռնութեամբ մի մասնախումբ, որը կազմված է ամբողջ Հայ Կանանց Կոմիտէից և չորս պարօններից. այդ մասնախումբը իր միջից կազմել է մի մարմին 4 անդամից և 1 անդամուհուց, նախագահութեամբ՝ տիկ. Բրիստինէ Զարիֆեանի, փոխնախագահ բիւրօյի՝ կառավարիչ Ամալա Դաւթեան, քարտուղար Ցակոբ Ղազարեան, գանձապահ Ցարարիւն Գալստեան, որոնք ձեռնարկել են հաւաքել քանակով ցորեն կամ ալիւր ստանալ, իր վրա վերցնելով ի հարկէ նաև վագոններ ստանալու միջնորդութիւնը։ Այլապէս մեր ամայացած գիւղերը, որ սիրով խնամում են իրանց մէջ գտնվող բազմաթիւ գաղթականներին, հիմնովին քայքայվում են և զրկվում թէ ապրելու և թէ ապրեցնելու հնարաւորութիւնից։

Մեր գիւղի այգիները այս տարի բաւական նշանակութիւնով ամլացած են. չը կայ ոչ խաղող և ոչ էլ օրէկ տեսակի միրգ։ Աւատ է միմիայն հունը, որը թէև անտառներում ու այգիներում կարմրին է տալիս, բայց եղած չեղած մի հաշիւ է, որովհետև ոչ արտահանվում է օրէկ կողմ և ոչ էլ տեղում օգտագործվում։ Այսպիսով դրութիւնն աւելի ևս ծանրանում է, որովհետև հացի պակասը լրացվում էր այգիներից ստացված եկամտով, իսկ այժմ ոչ մէկը կայ և ոչ էլ միւսը։

Մեզանում գոյութիւն ունեցող փոխատու-խնայողական ընկերութեան վարչատան դուռը շաբաթ օրերով—երբ փող է բաց թողնվում—կատարեալ ուխտատեղի է նման լինում։ Ամեն մէկը շտապում է մի քանի ռուբլի ստանալ օրէկ տեղից ցորեն գնելու։ Ընկերութիւնը փող տալիս է 12 տոկոսով, ապատելով գիւղացիներին վաշխառուներին 50-ական տոկոսներ վճարելուց։

Երէկ գիշերվանից «Վալվար» տարի գլուխը ծածկված է ձիւնով։

Աւելորդ չէր լինի, եթէ Գիւղատնտեսական Ընկերութիւնը մի յատուկ ժողով դուռմարէր գաւառացիների մասնակցութեամբ գիւղացիութեանը սպառնացող սովի մասին խորհրդակցելու և միջոցներ ձեռք առնելու նպատակով։ Բ. Մկրտումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ ժամանեց Կովկասի Փոխարքայ Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչը։ Ընդունելութիւնը բաւական փառահեղ էր։ Մանրամասն նկարագրութիւնը կը տանք վաղվայ համարում։

◆ Քաղ. դումայի օրօրման համաձայն, Վարշավայի պոլիտեխնիկումը Թիֆլիս փոխադրելու առիթով, քաղաքացուները հետաքրքիր հեռագիրն է ուղարկել առանձին և արդիւնաբերութեան մինիստր Իշխան Շախովսկիին. «Ի լրումն նախկին միջնորդութեան, Թիֆլիսի քաղ. դուման երէկ օրոշեց Վարշավայի պոլիտեխնիկական ինստիտուտի կահաւորութեան համար բաց թողնել 150,000 ռուբլի և յատկացնել բոլոր անհրաժեշտ շէնքերը, պոլիտեխնիկումը Թիֆլիս փոխադրելու դէպքում։ Նաև յատկացնել դումարներ պրոֆեսորներ ուղարկելու համար։ Համապատասխան առաջադրութեանը ընթացք կը տրվի։ Մեր քաղաքում կատարեալ հանգստութիւն է տիրում. այստեղ ապատատնել են շատ հատատութիւններ փոխադրված ուրիշ վայրերից»։

◆ Կառավարութեան թոյլատրութեամբ Թիֆլիսի հայ եկեղեցիների միաբանութիւնների ու հոգաբարձութիւնների յանձնաժողովը յօգուտ «Թիֆլիսի Հայ Ծխական Համայնքի առաջին օգնութեան» առաջիկայ հոկտեմբերի 20-ին կազմակերպում է միօրեայ ժողովարարութիւն «Լուսաւոր Թերթի» վաճառումով։

◆ Նախընթաց օրը Ամերիկայից Թիֆլիս եկան 260 հայ կամաւորներ։ Երէկ մեկնեց նրանց մի մասը Երևան։

◆ Քաղաքի կազմակերպած չորրորդ սանիտարական և ապրանքատար խումբը պատրաստ է արդէն և այս օրերս կը մեկնի ռազմաբեմ։

◆ Քաղաքների Միութեան Կովկասեան ճիւղի բիւրօն ձմերային արշաւանքների համար տաք հագուստների և կօշիկների պատրաստութիւն տեսնելով Մոսկվա աւղարկեց բժիշկ Մարգարեանին հարկաւոր երերը գնելու։ Այժմ բժ. Մարգարեանից ստացվել է մի հեռագիր, թէ Մոսկվայում գները շատ բարձր են և ամեն բան գտնել և գնել անկարելի է։

◆ Քաղ. Դումայի այն իրաւասուները, որոնք քաղաքի կողմից նուէրներ են առրել կովկասեան ռազմաբեմ՝ զինուորներին բաժանելու, այս օրերս հրատարակելու են այդ նուէրների հաշուետուութիւնը։

◆ Առաջիկայ հոկտեմբերին Թիֆլիսում կը կայանայ կովկասեան մեղուապահների համագումարը, նախաձեռնութեամբ Մեղուապահական Ընկերութեան։ Համագումարը քննելու է մի շարք հարցեր, թէ ինչպէս կազմակերպել մեղրամոմ գնելու և մեղրը առանց միջնորդների սպառելու գործերը։ Որոշված է այդ խորհրդակցութեանը հրաւիրել Կովկասի գիւղատնտեսութեան վերատեսուչ Ս. Ն. Տիմօֆէեվին և ներկայացուցիչներ ուղղափառ և հայ հոգևորականութիւնից և տեղական Գիւղատնտեսական Ընկերութիւնից, նաև մանր վարկի վերատեսուչներին։

ՄԱՄՈՒԼ

ԿՈՎԿԱՍԻ ՄԱՄՈՒԼԸ ՆՈՐ ՓՈԽԱՐՔԱՑԻ ՍԱՍԻՆ

Պաշտօնական «Кавказъ»-ը գրում է.

Մենք օրաթերթ ենք և հպարտանում ենք նրանով, որ մեր երկրի կառավարութիւնը տրվել է, ամբողջ աշխարհից արդէն նկատված և գնահատված, Մեծ Իշխանի առնական ձեռքը։

Վրաց «Սաքարթվելօն» ասում է.

Բարի ղեկավարը, իմաստուն և փորձված կառավարիչը—բաղդաւորութիւն է երկրի համար։ Ինքը վրաց ժողովուրդը Մեծ Իշխանի մէջ տեսնում է բարի ղեկավարի, և հաւատացած է, որ Ն. Կ. Բ. բարեացակամ վերաբերմունք ցոյց կը տայ երկրի փոքրիկ ժողովուրդներն և չի համակրի նրանց պատական իրաւունքների ոտնահարման։ Վրաց ժողովուրդը գիտէ այդ և ակնկալ ողջունում է Մեծ Իշխանին և դիմաւորում է Նրան յոյսով և ցնծութեամբ։

Վրաստանը այսօր համեստ է իր ծառայով և իր պակասութեամբ, բայց նա միշտ այդպէս չէ եղել։ Նրա կուլտուրան ընկել է, նրա ձայնը թոյլ է, քաղաքական արժէքը մեծ չէ, լուսաւորութիւնը զրկված է օյժից և կենսունակութիւնից, բայց, կրկնում ենք, միշտ այդպէս չէ եղել նա։ Եղել է ժամանակ, երբ Վրաստանը միակ աստղն պէս փայլել է ամբողջ Անդրկովկասում, երբ նա միակ տիրապետողն է եղել Սև-ծովից մինչև Կասպից ծովը, Կովկասեան լեռնաշղթայից մինչև Արաքսը։

Վրաց ժողովուրդը ունի և՛ օյժերև՛ ընդունակութիւններ առաջադիմութեան գործի համար։ Պէտք է դռները լայն բանալ նրա թաղված օյժերի առաջ, պէտք է վերացնել այն մթնոլորտը, որ նեղում է նրա շարժման, և այն ժամանակ ժողովրդական օյժերը հրաշքներ կը գործեն ի բաղդաւորութիւն մեր երկրի և կայսրութեան։

Մեծ Իշխանի, որպէս Թագաւորի Փոխարքային, Վրաստան գալու հետ վրաց ժողովուրդը կապում է հէնց այդպիսի յոյսեր։ Նա կարծում է, որ Մեծ Իշխանը, փոքր ժողովուրդների իրաւունքների համարաւորները, կապանք չի դնի վրացիների պատական իրաւունքների վրա, այլ մեր ժողովուրդը կը կանգնեցնի այս ճամբի վրա, որը կը հասցնի մեզ և կայսրութեանը ընդհանուր բաղդաւորութեան։ Դարաւոր կաղնու հզօրութիւնը չի թուլանայ, եթէ նրա ստուերում կը ծաղկի գարնան մանիշակ. բայց այդ նոյն մանիշակը, գլխիկոր ու թոշնած, ոչ օգին բաւականութիւն չի պատճառի։

«Тиф. Листокъ» նկատում է.

Այսուհետև կովկասեան երկրի բոլոր ակնկալութիւնները ուղղված են Մեծ Իշխանին, որի պետական խելքը և փորձառութիւնը կը թելադրեն նրան, թէ ինչ է անհրաժեշտ Կովկասին և թէ օրէնսդրական ինչ առաջադրութիւններ պէտք է առաջին հերթի դրվեն։

«Кавк. Сл.»-ն գրում է.

Աղդաբնակութիւնը այսօր դիմաւորում է Մեծ Իշխանին վստահութեամբ և յուսով, որովհետև այն անձը, որի ձեռքին էր գտնվում Եւրոպայի բաղդը մի ամբողջ տարի, չի կարող վստահութեամբ չը վերաբերվել Կովկասի հասարակական շերտերին, Կովկասի, որի որդիները քաջաբար կռուում են ռուս բանակի զանազան մասերում։

Իսկ «Закавказская Рѣчь»-ը հնարաւոր է համարել այսպիսի տողեր.

Կովկասի վրացիները և թուրքերը, իբրև հարաւային ժողովուրդներ, Մեծ Իշխան Փոխարքայից սպասում են վստահութիւն դէպի իրանց...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՓԵԱՆ

Բաց նամակ պ. Գ. Փիրումեանին

Թիֆլիս, 22 սեպտ.

Վարդանանց տօնի օրը, պ. Բ. Ասրեանի ընակարանում՝ ճաշկերոյթի ժամանակ, դուռ մի փոքրիկ գումար ժողովեցիք յօգուտ գաղթականների, որը խստացաք յանձնել «Մշակի» խմբագրութեան։ Ճաշկերոյթին ներկայ գտնվողներից մի քանիսը երկար սպասելուց յետոյ՝ դիմում են ինձ և խնդրում իմանալ, թէ ե՞րբ, ում է յանձնված վերոյիշեալ գումարը, և եթէ յանձնված է, երևի կունենաք արդարացուցիչ վկայական, քանի որ «Մշակի» նուիրատուների ցանկում չը կայ։ Սրանով դիմում եմ ձեզ և խնդրում, ի միամտութիւն նրանց՝ նուիրատուների, հաշիւ տալ մամուլի միջոցով։

Նուիրատուներից մէկը

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Բաշտ, 11 սեպտ.

Թիւրքահայ գաղթականներին օգնելու նպատակով Բաշտում կազմված է՝ Բաշտի Հայ Կանանց Կոմիտէի նախաձեռնութեամբ մի մասնախումբ, որը կազմված է ամբողջ Հայ Կանանց Կոմիտէից և չորս պարոններից. այդ մասնախումբը իր միջից կազմել է մի մարմին 4 անդամից և 1 անդամուհուց, նախագահութեամբ՝ տիկ. Բրիստինէ Զարիֆեանի, փոխնախագահ բիւրօյի՝ կառավարիչ Ամալա Դաւթեան, քարտուղար Ցակոբ Ղազարեան, գանձապահ Ցարարիւն Գալստեան, որոնք ձեռնարկել են հաւաքել

*) Ազատագրն ախտերից մէկն է կազմում հայկական կեանքում հասարակական գործերի պարտիկուլարիզմը և ինդիվիդուալիզացիան։ Թուածս ընկերութիւնները չունեն տարբերութիւններ ոչ իրանց նպատակների և ոչ գործունէութեան եղանակների մէջ։ Աւելին. չը կան տարբերութիւններ նաև նրանց զեկավար մարմինների քաղաքական հայեացքների մէջ. մինչդեռ ուղղութեան և մտածելակերպի մարդիկ են նրանք։ Բայց և այնպէս ոչ միայն համերաշխութիւն չը կայ նրանց մտակերպ գործունէութիւնի մէջ հանրական ազէտի հանդէպ, այլ և բացայայտ թշնամութիւն, մէկը միւսին խանգարելու և խոչընդոտելու յատուկ ջանքեր։ Պատճառ. որովհետև նրանք տարբեր թայֆաների, խնամէական գրուպպաների մարդիկ են և առանձնապէս, անհասորդն փայլելու տենչանքը կազմում է զեկավար շէֆերի լեյտմոտիվը։ Ոչ թէ ընդհանուր գործի բարեկարգութիւնն ու առաջադիմութիւնն է կազմում բոլորի հիմնական ձգտումը, այլ այն անջատ ջանքերը, թէ ինչ և ինչպէս անէ ամեն մէկը (ընկերութիւնը), որ հրապարակով ներկայ և շնչվի նրա գերազանցութիւնը միւսների հանդէպ։

**) Մենք առանձնապէս յանձնարարում ենք ընթերցողին կարդալ «Մշակի» № 200-ի Բանախրակները, Թղթակցութիւն Մոսկվայից, որ մանրամասն նկարագրված է լատիշական կոմիտէի բազմակողմանի գործունէութեան իրական պատկերը։ Բոլոր հիացմունքների արժանի գործունէութիւն է ծաւալել լատիշական կոմիտէն ռուսական մայրաքաղաքում։ Նա բաց է արել՝ 1. Աշխատանքի բաժնմունք, 2. Իրաւաբանական բաժ., 3. Բժշկական բաժ., 4. Զորքերի բաժ., 5. Դպրոցական բաժ., 6. Արհեստանոցների բաժ., 7. Ցնտեսական բաժ., 8. Տեղեկատու բաժ., 9. Ստատիստիկական բաժ., 10. Լատիշական գեղարուեստի և կուլտուրայի բաժնմունք։ 52 գործող անդամներով և 30,000 ռ. դրամագլխով լատիշական կոմիտէն շատ աւելի մեծ գործ է կատարել 18,000 փախստականների համար, քան հայ բազմանդամ ընկերութիւններն ու Էջմիածնի մարմիններն են գործել 32,000 փախստականների համար (Էջմիածնում խմբված), ունենալով իրանց տրամադրութեան տակ հարիւր հազարների կապիտալ։

Նոյնիսկ անընդունակ եղան նրանք Կովկասի կենտրոններում (Թիֆլիս ու Բաքու) բաց անելու աշխատանքի բիւրօ և յատուկ ջանքերով աշխատանք հայթայթելու կարող, առողջ փախստականների համար; որպէս զի սրանց, որպէս անգործների, չը հեռացնէին քաղաքներից։

Գաղթականական գործում փայլեց իր անգործունէութեամբ նաև հայ մեծ կազմակերպութիւնը՝ կամաւորական շարժման տէրն ու զեկավարը։ Մի կազմակերպութիւն, որ իր կուռ օյժերին առանձնապէս յանձնարարում էր՝ «աղերք, տոկոսների հարց է» լոզունգը, կապելով դրա հետ իր քաղաքական երազների իրականացման հնարաւորութիւնը, թուում է, այդպիսի մի կազմակերպութիւն ամենից շատ պիտի մտահոգէր մեր երկիրը ապաստանած թիւրքահայ փախստականների պահպանութեան մասին։ Չէ որ նրանց վերաբնակութիւնը՝ մի իսպառ ամայացած երկրում, հայ ազգաբնակչութեան հիմքը կը կազմէր՝ գոնէ մի քանի կարևոր կենտրոններում։ Բայց ինչքա՜ն անփոյթ ու անտարբեր գտնվեց, ակտիվ գործունէութեան չը ձեռնարկեց այդ կազմակերպութիւնը՝ մասնայօրէն մահացող ժողովրդի գործը դիւրացնելու համար։

Այդ իրաւացի հարցը չունի դժբաղդաբար ոչ մի արդարացի պատասխան։ Մենք, անշուշտ, դրամական օժանդակութեան հարց չենք դնում հրապարակի վրա, այլ անձնուէր մարդկանց կենդանի, եռուն ու բեղուն գործունէութեան պահանջ։ Իսկ մարդիկ, որքան կուզէք, ունի այդ կազմակերպութիւնը իր տրամադրութեան տակ։

Նրա լրագրական կոչերն ու ագիտացիան՝ յօգուտ փախստականների գումարներ նուիրաբերելու համար, նոյնքան կրաւորական աշխատանք է, որքան բարեգործական ընկերութիւնների ժողովարարութիւնը կամ բուրժուայի տուած «բարեգործական կապիտալը»։ Մի կազմակերպութիւն, որ կարողացաւ բուռն թափով ակտիվ գործունէութիւն ծաւալել կամաւորական շարժման սահմաններում՝ «հայրենիքը ազատելու համար», նա կարող էր և պարտաւոր էր դէթ կիսով չափ աշխատել, որպէսզի կոտորածից ազատված հայրենակիցները փրկվեն նաև մասսայական մահացութեան ճարակից։ Նա ունի գաղափարակից ստուար ինտելիգենցիա, բարձր դիրքի ու կոչման տէր համակրողներ, վերջապէս նրա գործունէութեան կօժանդակէր կենտրոնական կոմիտէի դրամական ֆոնդը*)։

Այս բոլոր բացատրութիւններից և դիտողութիւններից յետոյ ըստ ամենայնի պարզվեց, կարծում ենք, այն հարցը, թէ ինչու հայ գաղթականական ազէտը այնքան լայն և խոր չափեր ընդունեց՝ յատկապէս իր մահացութեան դէպքերով։

Հայ հասարակական կոլեկտիվի լայն շերտերի անգիտակցութիւնը, գործի գլուխ անցած մարմինների անձեռնհասութիւնն և անկազմակերպութիւնն հայ դրամատէր բուրժուազիայի անտարբերութիւնն ու կրաւորականութիւնն, հայ ընկերութիւնների և «ուժեղ բազկով» օժված հայ կազմակերպութեան անփութութիւնն ու ապիկարութիւնն, և ուրիշ մի շարք հանգամանքներ, որոնց մասին խօսելու տեղը և մանաւանդ ժամանակը չէ այժմ։

Ահա այդպէս դիմաւորեց ռուսահայութիւնը թիւրքահայ փախստականների գաղթականական հեղեղատին։ Բ. Իշխանեան

(Վերջ)

*) Հասարանաց անհատների անձնուէր գործունէութիւնը՝ այդ կազմակերպութեան շարքերից, չէ փոխում իրերի դրութիւնը։ Խօսքը վերաբերում է հաւաքական մի մարմնի ծաւալած գործունէութեան՝ կեանքի կոչված բացառապէս կազմակերպութեան օյժերի նախաձեռնութեամբ։

պեն ներկայացում, երեկոյթ, զբոսանք և այլն յօգուտ գաղթականներու։

Այդ մարմինն իր հովանաւորութեան տակ է վերցրել ռուսաց գեներալ հիւպատոս Գ. Վ. Օվսէենկո, որի միջոցով և գանձված գումարները փոխադրվելու են Էջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Մանաժողովի զբաղմունքությունը, կնատրոլի է ենթարկվելու հիւպատոսի կողմից։

Հիւպատոսը ցոյց է տալիս ամենասիրալիր վերաբերմունք այս ձեռնարկութեան։

Արդէն գանձված և յանձնված է հիւպատոսին Էջմիածին փոխադրելու 1575 ռ։ Նուէրների գանձումը շարունակվում է։

Բաշի հայերը տալիս են իրանց կարողութեան չափ առատ նուիրատուութիւն։ Նուիրատուների ցուցակը կը տպագրվի մամուլում գանձումից յետոյ։ Ա. Դ.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բորժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բորժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Գուլիա, Վօռնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում ըստ շաբաթական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Դ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային երեխայոց հիւանդութ. և ծանկահաս.։

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕԶԻՀ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՅԵԱՆ—12—1 ժ. երեշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահաս.։

ԳԻՆ-Բ. ՅԻԶՆ ՅԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕԶԻՀ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Հրաւերները ձրի։ Համաթորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդասացի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱՏՆԻ ՅԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և բէյէկան։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի շափահասի համար։ բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպերով և այլ ցուցերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպերի և բժշկութեան մասին, բէյէկաներով։ Գինը 50 կօպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՀՆԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շտապոյթ օգնել։ Բազմաթիւ տեսակ դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կօպ.։

3) «ԾԻԾԱՂԻ ՏՅԱՌՈՒ» ամենալաւ և ծիծաղաշարժ անեկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տեսքի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻՐՔ ՆՈՒԷՐ

երկու հետևեալ գրքերը. 1) «Կնիկամամի շալվարը» ծիծաղաշարժ վօդէվիլ շափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Բաֆֆի» պատկերով (գ. 10 կ.)։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կօպ. առաջուց ուղարկել անպայման պէրէվոդով։ (Մարկաներ չը գնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէն՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՀՂԵՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԷ

ՅԱՎԱ. ՁԱՀ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑ

Ընդունելութիւնները օրական 24-էջ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 1-ից, կուրսերը—սեպտեմբերի 1-ից, Գուսանովսկայա փող. № 31. Տ. Մ. Ֆիլոցեանի տունը։ 640. 10—9

«ՄՇԱԿ» ԳՐԱՍԵՆԵԱԿԱՆ ԽԱՆՈՒԱՐ է Ա. ՔՈՂԱՆԹԱՐԻ կողմից

ԱՍՍՈՒՆԻ ՔԱՐՏԷԶ

Գեղարվեստ գունաւոր 5 կոպէկ ձանապարհածախսով հարց 8 կ. Գումարով գնողներին վերադիր 2 հատ։

Ներկերապատ գիւղի համար հարկաւոր է

ՄԻ ՎԱՐԺԱՊԵՏ

— ԿԱՄ —

ՎԱՐԺՈՒՀԻ

300 ռուբլի ռոճիկով։ Տրվում է բնակարան, վառելիք, լուսաւորութիւն և ծառայ։

Դիմել՝ Ստ. Խալդանի, Благочинному священнику Саакъ Ширванянцу.

673. 2—2

174. 0—52

ПРИ ГОНОРРЕѢ

въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ

„АРМАТИНЪ“ А. Я. АКУЛІАНЦА

для внутренняго употребленія. „Арматинъ“ совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина“ не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ“ А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ“ только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рецепт. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

(Ն. Կ.)

„ՁԻԹԵՆԻ“

ԳՐԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ՈՐԲԵՐԻ

մասնակցութեամբ հայ գրականագէտների և գրողների՝

Ալ. Ծատուրեանի, Վ. Տէրեանի, Ոսկրիչոս Անգեհեանի, Մ. վ. Մաքսուտեանի, Ց. Կոստանեանի, Ց. Ցովհաննիսեանի, Ա. Զանեանի, Լ. Գրիգորեանի, Կ. Կամարի, Տ. Տէրունիի, Գ. Քալաշեանի, Հ. Մազմանեանի, Շիրվանզադէի, Վ. Փափազեանի, Ստ. Մալխասեանցի Գ. Զուբարի, Կ. Կոստանեանի, պրոֆ. Ս. Սղիպարեանի, Հ. Առաքելեանի, Գ. Բաշինջաղեանի, Ա. Եղեկեանի, Ալ. Աբէլեանի, Լ. Քալաթարի, Բ. Իշխանեանի, Դ. Անանուանի, Սուրխաթեանի, Սմ. Տէր-Աւետիքեանի, Ստ. Տէր-Աւետիքեանի Ա. Աթանասեանի, Իշխան Գ. Թումանեանի, Ա. Սարուխանի, Ա. Թէթեվաճեանի, Ռ. Խան-Ազատի, Ց. Մալխասեանի, Ց. Ակունեանի, Ց. Սօլովեանի, Ստ. Զօրեանի, Վ. Նուրեանի, Կ. Միքայէլեանի, Գ. Լևոնեանի, Լևոն Բաշինջաղեանի։

Այս օրերս դուրս կը գայ մամուլի տակից։ Գինն է Թիֆլիսում 2 ռուբլի, Թիֆլիսից դուրս ճանապարհածախսով 2 ր. 50 կ.։ Ցանկացողները ստանալ Ալմանախը՝ դիմելու են այս հասցէով. Թիֆլիս, Հայ Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակ, Սօլոմոնովսկայա № 21. Тифлисъ, Армянское О-во „НПАСТАМАТУЙЦЪ“ Соломоновская, № 21.

Ի նկատի ունենալով Ալմանախի նպատակը, ցանկալի էր, որ ամեն մի անձ փութաթար ձեռք բերել և դրանով օգնել նաև օրերի պահպանութեան։

Խմբագրական Ծանձնաժողովը խնդրում է ինտելիգենտ անձանց տարածել Ալմանախը իրանց շրջանում։ առ. (օ. մ.) 669. 5—2

Լոյս են տեսել և վաճառվում են

ՍԱԼ-ՄԱՆԻ

ՀԱՅԱԶԳԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

Պատկերազարդ հետևեալ գրքերը.

1-ին. Գեներալ-ադիւտանտ ԿՈՄՍ Մ. ԼՕՌԻՍ-ՄԵԼԻՔՅԱՆ 40 կ.
2-րդ. Դաղստանի և Կարսի հերոս գեներալ-ադիւտանտ Յ. ԼԱԶԱՐԵԱՆ 30 կ.
3-րդ. Բայազէտի հերոս գեներալ-լէյտենանտ ԱՐՇ. ՅԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆ 35 կ.

Երեք գրքերը միասին՝ ճանապարհածախսով և վերադիր վճարով արժէ 1 ր. 35 կ.։

Դիմել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Бебутовская ул. № 6. Екатеринѣ Айруни.

(Ե.Հ.) 699. 10—6

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ

Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնովոդսկայա փ. տ. Աւան-Իզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտորներ) յայտնի ԿՕՀՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզոնական անգլիական շարժիչներ, (մօտորներ) «ԿՐՕՍՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ձիուն ½ ֆունտ կամ 200 գրամմ։

Գազային շարժիչներ, օրանք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լօկոմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, արաքտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում գանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժենէրներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.

(Հ.Կ.) 551. 150—133

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրէ՛ֆնի, I և II հատորներ	1 ր.	50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի		40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր.	20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի		40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ		15 կ.
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի		50 կ.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.	
8) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի		40 կ.
9) ՄԻ ՀՆԶԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վէպ գրութիւն), Ստ. Մալխասեանցի		40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի		35 կ.
11) ՅՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով		15 կ.
12) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ. Մ.-ի		15 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		30 կ.
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի		80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր.	50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլէրի, թարգմ. Իս. Յարութիւնեանի.		40 կ.
18) ՓԱՐԱՕՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղեկեանի.		15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.		20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շիսեանի		20 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շիսեանի		25 կ.
22) ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԷՄԸ, Բ. Իշխանեանի		20 կ.
23) ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆԵՐԸԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, Գ. Տէր-Թուբիսեանցի		10 կ.
24) ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Զէնցի		3 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%։ (6) 0—10

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան հսկողութեան ներքոյ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

Տ. Մ. ՓԻԼՕՑԵԱՆԻ

ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ

(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տէլ. № 9—76.)

Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Մրագիրներն ու կանոնները օգտագրվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։

(Կ. Ե. Հ.) 480. 0—28

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող

Հաշուապահական Կուրսեր Գ. Կ. ՅԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ

Թիֆլիս, Նիկոլայէվսկայա փող., № 36,

Նոյն տեղը ՊԱՆՍԻՕՆ Մ. ՅԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ

Ընդունվում են աշակերտներ լրիւ պանսիօնով, դասերի պատրաստութեամբ և առանց։ Խնդիրների ընդունելութիւնը երեկոյեան ժամը 3—7-ը։

(Ե. Հ. Շ. Կ.) 541. 50—23

Ս.-Պետերբուրգի Պետական Կոնսերվատորիայի Գեղարուեստական Խորհրդի

ԴՐՈՒԱՏՄԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ

Հայ դպրոցների III և IV բաժանմունքների

ԵՐԳ-ՉԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Առաջարկում ենք մեր

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ

Ա. մաս՝ դիատոնիկ. — Գինը 35 կօպէկ։

Դիմել բոլոր հայ գրավաճառներին։

Պահեստը Ա. Մանուկեանի մօտ. հասցէն՝ Դայիանեան դպրոց։

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ, ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Կ. Հ.) 620. 8—5

Бичъ человѣчества побѣжденъ.

Ка лѣченіе хроническаго трипперa нужно потерять только 50 минутъ и Вы избавитесь разъ навсегда отъ этого недуга который Васъ мучилъ несколько лѣтъ, подтачивалъ Ваше здоровье, разрушалъ Вашъ организмъ и укорачивалъ Вашу жизнь.

ДАРОВОЙ РЕЦЕПТЪ.

Нужно взять только 2 двойныхъ флакона „рапидъ“ и коробку чимоль разрѣшен. медиц. совѣтомъ за № 1295 и ежедневно тереть на лѣченіе только двѣ минуты въ теченіе трехъ недѣль будете совершенно здоровы. Въ теченіе пятиц лѣтъ изобрѣтенный мною средство „рапидъ“ излѣчило десятки тысячъ больныхъ и успѣло заслужить громкую извѣстность по всей россіи и даже заграницей.

Кромѣ того, преимущество моего предложенія заключается въ томъ, что Вы матеріально не рискуете, такъ какъ, если не излѣчитесь, то по полученіи отъ Васъ анализа мочи, указываю, что болѣзнь не излѣчена, я не медленно возвращу Вамъ деньги, затраченныя на покупку моего лекарства.

Такая увѣренность въ благопріятномъ дѣйствіи моего препарата „рапидъ“ основана на четырехлѣтнемъ съ нимъ опытѣ.

За это время тысячи больныхъ пользовались „рапидомъ“ и результатомъ пользованія во всѣхъ случаяхъ было полное излѣченіе, на что у меня имѣются доказательства въ видѣ очень многочисленныхъ благодарностей-писемъ. Такіе результаты говорятъ сами за себя и даютъ мнѣ полное право смѣло заявить что случаевъ неизлѣченія препаратомъ „рапидъ“ нѣтъ и каждый больной употребившій два двойныхъ флакона препарата „рапидъ“ безусловно излѣчивается, какъ бы болѣзнь долго ни продолжалась.

Обращаю вниманіе больныхъ на то обстоятельство, что моя увѣренность въ средствѣ „рапидъ“ и мое обѣщаніе не голословны, въ подтвержденіе чего каждому выписавшему отъ меня 2 двойныхъ флакона препарата „рапидъ“, я вместѣ съ лекарствомъ высылаю обязательство о возвратѣ денегъ въ случаѣ неизлѣченія.

Цѣна за два двойныхъ флакона (полный курсъ лѣченія) и коробка чимоль 3 руб. Наложен. плат. и съ пересылкой 10 р. Мал. платежъ высылается только по полученіи 3 руб задатка.

Заказы и требованіе адресовать исключительно въ Главное отдѣленіе Московской Аптекаторіи, Мясницкая, Тифлисъ Эриванск. пл. Пушкинская 3 отд. 6|М. верхный этажъ.

(Ն.) 609. 50—3

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.